# ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՄԵԾՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՋԻՆ՝ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԱՐՔԱ ՀԱՅՈՑ

Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել
երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային
եւ ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս:
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպ Երկրորդի սպանությունից հետո՝ մ.թ.ա. 336 թ., գահը ժառանգեց նրա հանճարեղ որդին՝ Ալեքսանդր Մակեդոնացին: Այդ ժամանակահատվածում հունամակեդոնացիների մեջ հասունացել էր այն գաղափարը, որ ասիական տարածքները պետք է նվաճել իրենց ոխերիմ թշնամի Աքեմենյան կայսրությունից: 334 թ. Ալեքսանդր Մակեդոնացին հունաց հզոր զորաբանակով ներխուժում է Փոքր Ասիա: Շուրջ տասը տարի անընդմեջ ջախջախիչ հարվածներ տեղալով (մ.թ.ա. 333 թ. Իսոսում, 331 թ. Գավգամելայում եւ այլուր)՝ նվաճում է Աքեմենյան կայսրությունը: Վերջինիս սահմանները ձգվում էին Էգեյան ծովից մինչեւ Հնդկաստան, Եգիպտոսից մինչեւ Միջին Ասիա (Սիր-Դարիա գետը): Ալեքսանդր Մակեդոնացին, զինաբախումներով բազմաթիվ խոչընդոտներ վերացնելով, հաղթարշավով թափանցում է Հնդկաստան (Ինդոս գետ): 324 թ. հոգնած զինվորների պահանջով նա ստիպված էր դառնալ իր տերության մայրաքաղաք՝ Բաբելոն: Ալեքսանդրը ջանք ու եռանդ չէր խնայում շարունակելու իր ծրագրած նվաճումները, սակայն 323 թ. 33-ամյա Ալեքսանդրի հանկարծակի մահը խափանում է նրա հեռագնա ծրագրերը:

Աքեմենյան կայսրության փլատակների վրա ստեղծվում է մի նոր համաշխարհային հզոր տերություն՝ Ադրիատիկ ծովից մինչեւ Հնդկաստան (Ինդոս գետ), Պոնտական ծովից մինչեւ Նուբիա: Մակեդոնական թագավորության արքունիքում Ալեքսանդրին արժանի համազոր հետնորդ չլինելու պատճառով[1], բնականաբար, կայսրությանը տիրանալու համար ժառանգների («դիադոխ», զորավար) միջեւ անզիջում պայքար ծավալվեց, որն ընդգրկեց հունա-

1 Տե՛ս **Э. Д. Фралов**. История эллинизма в биографиях его творцов. **Г. Бенгтсон**, “Правители эпохи эллинизма”, М., 1982. էջ 8-9:

մակեդոնական աշխարհը եւ նորանվաճ արեւելյան երկրները: Ժառանգորդների կռիվները երկար տեւեցին՝ մինչեւ մ. թ.ա. Գ. դ. 80-ական թվականները[2]: Մրցակիցներն ի վերջո հանգեցին համաձայնության, որ յուրաքանչյուրն իշխի իր զենքով տեր դարձած տարածքներին: Ամենանշանավոր ժառանգորդներից Պտղոմեոս Առաջինը («ռազմատենչ», մոտ մ.թ.ա. 360-289 թթ.) տիրեց Եգիպտոսին, որի մայրաքաղաքն էր Ալեքսանդրիան: Պտղոմեյան դինաստիայի հիմնադիրն էր[3] Սելեւկոս Առաջին Նիկատորը («հաղթող» (մ.թ.ա. 358-281 թթ.), որն ստացավ Ալեքսանդր Մակեդոնացու տերության ասիական՝ ցամաքային ամենամեծ տարածքը[4], հանդիսացավ Սելեւկյան դինաստիայի հիմնադիրը), նստավայրն էր Բաբելոնը: Բոլոր դիադոխներն իրենց թագավոր հռչակեցին: Եթե Ալեքսանդր Մակեդոնացին հանդես էր գալիս իբրեւ Զեւս-Ամոնի որդի, ապա Սելեւկոսն իրեն հայտարարում էր Ապոլոնի որդի[5]: Սելեւկոսն իբրեւ սատրապ Բաբելոնում գահակալում էր մ. թ. ա. 311-317/316 թթ.[6]: Նա աստիճանաբար իր թագավորությանը միացրեց հյուսիսային Սիրիան, որը դարձավ կայսրության ամենակարեւոր հատվածը՝ միջուկը: Մեծ էր վերջինի տնտեսական նշանակությունը: Ստեղծվում էր ծովային առեւտրով զբաղվելու լայն հնարավորություն: Սելեւկոսն Օրոնտես գետի վրա հիմնադրեց իր նոր մայրաքաղաքը, որն իր երկրային հոր անունով կոչեց Անտիոքիա: Քաղաքի շրջանը նվիրեց իր երկնային հորը՝ Ապոլոնին: Անտիոքը հիմնադրելուց հետո Սելեւկոսը քաղաքից ոչ հեռու (7,5 կմ)՝ Դափնայում, կառուցեց Ապոլոնին արժանի վիթխարի չափերի տաճար[7]: Կառուցվեցին այլ քաղաքներ եւս: Օրոնտեսի վրայի Ապամեան, Պիրեայում՝ Սելեւկիան, ծովեզրյա Լառդիկեան եւ այլն: Այսինքն՝ Սիրիան կայսրության ամենաուրբանիզացված երկրներից էր: Այստեղ հաստատված հունամակեդոնական բնակչության մեծ քանակության շնորհիվ հելլենիստական մշակույթը լայն տարածում է ստանում[8]:

Սելեւկոսի թագավորությունը կազմված էր տարաբնույթ երկրամասերից: Կարեւորներն էին Միջագետքը, Հյուսիսային Սիրիան եւ Մարաստանը: Ռազմական առումով անառիկ դարձնելու նպատակով Սելեւկոսն այդ տարածքներում բազմաթիվ քաղաքներ հիմնեց[9]: Հունամակեդոնացիների մոտ՝ Միջագետքում Բաբելոնի դերը թուլացնելու համար Տիգրիսի վրա կառուցեց Սելեւկիան՝ իր նոր մայրաքաղաքը, որի դիրքն այնքան հաջող էր ընտրված, որ այն շուտով դարձավ առեւտրական խոշոր քաղաք, արեւելքից դեպի միջերկ-

2 Տե՛ս **Э. Д. Фралов**, նշվ. աշխ., էջ 9:

3 Տե՛ս **Г. Бенгстон,** Правители эпохи эллинизма, Птолемей I, էջ 29:

4 Տե՛ս **Селевк I**, էջ 59:

5 Անդ, էջ 63-64:

6 Անդ, էջ 66:

7 Տե՛ս **Селевк I**, էջ 64:

8 Տե՛ս "Второй Всесоюзний Симпозиум по проблемам Эллинистической культуры на Востоке", май 1984 г., Тезисы доклатов, Ереван, 1984, էջ 3:

9 Տե՛ս **Селевк I**, էջ 76:

րական ձգվող մայրուղու կենտրոնատեղի: Կարճ ժամանակում բնակչության թիվը հասավ վեց հարյուր հազարի[10]: Կյանքի կոչվեցին եւ այլ քաղաքներ (Սելեւկիա, Անտիոքիա, Ապամեա եւ այլն), որտեղ բնակություն հաստատեցին մակեդոնացիներն ու հույները: Քաղաքները կառուցված էին հունականի օրինակով: Սելեւկոսի որդի՝ գահաժառանգ Անտիոքոս Առաջինի նստավայրը հանդիսանալու էր Տիգրիսի վրայի Սելեւկիան[11]: Սելեւկոսը եւ Անտիոքոս Առաջինը, հատկապես Անտիոքոս Երրորդ Մեծը (մ.թ.ա. 223-187 թթ.), աշխատում էին նպաստել Առաջավոր Ասիայում հելլենիստական մշակույթի տարածմանն ու արմատավորմանը[12]: Բաբելոնում նույնիսկ Սելեւկյանների օրոք, հույներից եւ մակեդոնացիներից բացի, հաստատվել էին խալդերը, որոնք պահպանում էին իրենց վաղեմի ավանդույթները: Տեղի էին ունենում խառն ամուսնություններ: Հունամակեդոնացիները միայն մ.թ.ա. Գ. դ. վերջին համակերպվեցին՝ կառավարող մարմինների մեջ ընդգրկելու տեղաբնիկ ազնվականներին: Այս խնդրին Սելեւկոսը, հետագայում Անտիոքոս Երրորդ Մեծը ըմբռնումով էին մոտենում[13]: Չէին խորշում օտարներից: Նորաստեղծ պայմանները հնարավորություն տվեցին երկու՝ հելլենական եւ տեղական մշակույթների փոխհարստացմանը եւ նոր ընկերային-տնտեսական հենքի վրա, այսպես կոչված, «հելլենիստական» մշակույթի ձեւավորմանը: Զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող երկրներում այն տարբեր ձեւով արտահայտվեց: Ստեղծված իրավիճակը նպաստեց առեւտրատնտեսական կապերի, ընթացիկ առեւտրի աշխուժացմանը, նոր քաղաքներ հիմնելուն ու քաղաքային կյանքի զարգացմանը, որը նպաստեց նորանկախ պետությունների առաջընթացին[14]: Սկզբնաղբյուրների հաղորդումներից դատելով՝ Գավգամելայի ճակատամարտում մ.թ.ա. 331 թ. Ալեքսանդր Մակեդոնացու դեմ Պարսկաստանի կողմից մասնակցում էին նաեւ հայկական զորքերը: Վերջիններս գլխավորում էին Մեծ հայքի սատրապ Երվանդը (Օրոնտես), Փոքր Հայքինը՝ Միթրաուստեսը[15] (Միհրվահիշտ):

Ալեքսանդր Մակեդոնացին թեեւ չնվաճեց Հայաստանը, սակայն, քանի որ վերջինս Աքեմենյան կայսրության սատրապություններից էր, ուստի Մակեդոնացուն էին անցնում ինչպես Աքեմենյանների գահը, այնպես էլ կայսրության բոլոր սատրապությունները, բնականաբար դրանցում եղած հանքերն ու հարստությունները: Ստրաբոնն[16] ասում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին

10 Տե՛ս անդ, էջ 77:

11 Տե՛ս անդ, էջ 79:

12 Տե՛ս **Селевк I**, էջ 77, **Э. Д. Фралов**, նշվ. աշխ., էջ 24:

13 Տե՛ս անդ, էջ 78-79, **Э. Д. Фралов**. նշվ. աշխ էջ 23:

14 «Հայ ժողովրդի պատմություն» (այսուհետեւ ՀԺՊ), I, Երեւան, 1971, էջ 496-498:

15 Տե՛ս **Arrian**, III, 8, 5; 11, 7. Curt Ruf. IV 12, 10, 12. ՀԺՊ, I, էջ 494. **Գ. Սարգսյան**, Անտիոքոս Գ. Սելեւկյանը եւ Հայկական պետությունները, «Բանբեր Երեւանի Համալսարանի», Երեւան, 1969, թ. 1, էջ 41:

16 Տե՛ս **Страбон**, География в 17 книгах. Перевод, статья и комментарии Г. А. Стратановского, Л., 1964. XI, XIV,9:

Մենոնի գլխավորությամբ մի ջոկատ է ուղարկում հյուսիսարեւմտյան Հայաստան՝ տեր դառնալու Սպեր գավառի ոսկու հանքերին: Տեղացիները գերում են նրանց եւ սպանում: Մենոնին ուղեկցում էր Բաբելոնում մ.թ.ա. 331 թ. Ալեքսանդր Մակեդոնացու դրածոն՝ Հայաստանի նոր սատրապ Միթրենեսը[17], որը մինչ այդ Լիդիայի կառավարիչն էր: Այնուհետեւ Մենոնը եւ Միթրենեսը չեն հիշատակվում[18]: Ալեքսանդր Մակեդոնացին չհասցրեց վերանվաճել Հայաստանը: Օգտվելով ժառանգորդների միջեւ ծավալված անզիջում պայքարից՝ Երվանդն ակներեւաբար իրեն անկախ էր հայտարարել: Որպես Հայաստանի սատրապ՝ Երվանդին հանդիպում ենք մ.թ.ա. 317-ին: Մինչ այդ, հավանաբար, նրան դեռեւս իբրեւ թագավոր չէին ճանաչել: Ենթադրվում է, որ նա Գավգամելայի ճակատամարտին մասնակցած Մեծ Հայքի զորքերի հրամանատարն էր: Այն ինչ չհասցրեց իրագործել Ալեքսանդրը, ժառանգորդներից կատարեց Սելեւկոս Առաջինը: Նա մ.թ.ա. 308 թ. խնդիր դրեց իրեն ենթարկել բոլոր առաջավորասիական երկրներն ու ժողովուրդներին, արեւելքից՝ Սուզիանայից եւ Մարաստանից մինչեւ Հնդկաստան: Այդ մասին համառոտակի խոսում է Ապպիանոսը [Սիրիական պատմություն 55]: Ըստ այդմ՝ Սելեւկոսն իր իշխանությունը տարածեց Միջագետքի, Հայաստանի, Պարսկաստանի, Բակտրիայի, Արաբիայի, Սողդիանայի, Հիրկանիայի, մինչեւ Հնդկաստան ձգվող երկրների ու ժողովուրդների վրա[19]: Սելեւկոս Առաջինի կայսրությունն ընդգրկում էր Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած արեւելյան երկրները, ծավալով գերազանցում էր բոլոր մյուս ժառանգորդների երկրները: Կարեւոր էր այն, որ բոլոր սատրապները չհապաղեցին ճանաչել Սելեւկոսի գերիշխանությունը[20]: Շատ առումներով Սելեւկոսը ներկայանում է որպես երկրորդ Ալեքսանդր: Ջուր չէ, որ նրան հնում անվանում էին մակեդոնական կայսրության երկրորդ հիմնադիր եւ հաղթողների հաղթող[21]: Սելեւկոսն իր նվաճումներով նշանավոր զորահրամանատարի համբավ ձեռք բերեց[22]: Բաբելոնում Սելեւկոս Առաջինի նստավայր եղած ժամանակից՝ մ.թ.ա. 312 թվականից, դրվեց նոր դարաշրջանի՝ մակեդոնական տոմարի սկիզբը: Հունարենն էր Սելեւկյան կայսրության պաշտոնական լեզուն[23]:

Անտիոքոս Երրորդ Մեծը (մ.թ.ա. 243 կամ 242-187 թթ.) գահ բարձրացավ երիտասարդ տարիքում (շուրջ 20 տարեկան), Սելեւկյան կայսրության համար ստեղծված ծանր պայմաններում: Երկիրը կանգնած էր փլուզման վտան-

17 Տե՛ս **Страбон**, անդ:

18 **P. Bernard,** Alexandre, Ménon et les mines d'or d'Arménie, Travaux de numismatique Grecque, Offerts ā, Georges le Rider, London, 1999, p. 49-52, p. 37-64.

19 Տե՛ս **Г. Бенгтсон**, Правители эпохи эллинизма. М., 1982. Селевк I, էջ 72:

20 Տե՛ս անդ, էջ 70, 72:

21 **Селевк I,** էջ 70:

22 Տե՛ս անդ, էջ 85:

23 Տե՛ս **Э. Бикерман**. Государство Селевкидов, М., 1985, էջ 7:

գի առաջ: Արեւմուտքում եւ արեւելքում ծայրամասային երկրներն սկսել էին անջատվել եւ անկախանալ[24]: Նա որոշել էր վերականգնել Սելեւկոս Առաջինի ստեղծած տերությունը: Նա Մարաստանի եւ Բաբելոնի սատրապներ Մոլոն եւ Ալեքսանդր եղբայրների ապստամբությունը (մ.թ.ա. 222-220 թթ.) ճնշելուց հետո ներխուժում է Ատրպատական[25]: Անտիոքոս Մեծն արեւելք արշավելիս նախ հարձակվում է Ծոփքի վրա (մ.թ.ա. 212 թ.), այնուհետեւ՝ իրենց անկախ հայտարարած պարթեւների, Բակտրիայի, Գանդհարայի, որից հետո՝ Արաքոզիայի, Դրանգիանայի, Քարմանիայի, ապա Պարսից ծոցի ափերով հասնում է մինչեւ կարեւոր առեւտրական կենտրոն Գերրա, Բահրենյան կղզիներ[26]: Նա նշանակալի չափով բարձրացրեց պետության հզորությունը, զարկ տվեց տնտեսության առաջընթացին[27]:

Անտիոքոս Երրորդ Մեծը արեւելյան արշավանքն սկսել է Ծոփք ներխուժելով: Ենթադրվում է, որ Ծոփքը (թագավորն էր Քսերքսեսը), Մեծ Հայքը եւ Կոմմագենեն կառավարում էին Երվանդունի տոհմին պատկանող թագավորները[28]: Անտիոքոսը բավարարվեց այդ թագավորներից սոսկ հարկեր գանձելով:

Արեւելյան փառավոր հաղթարշավի հետ համադրվող Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների, ինչպես նաեւ Անտիոքոսի՝ Պտղոմեյանների դեմ շահած պատերազմի շնորհիվ, որով կայսրության համար կենսական նշանակություն ունեցող Սիրիայի հարավային ափը՝ Կոյլեսիրիան եւ Փյունիկիան, անցան Սելեւկյաններին[29], նա որոշեց ընդլայնել երկրի արեւմտյան սահմանները Փոքր Ասիայում եւ ներխուժեց Հունաստան: Առաջին հերթին անհրաժեշտ էր ապահովել թիկունքը: Բնականաբար, այն վերաբերում էր հայկական պետություններին, որոնք կառավարում էին Երվանդունի սատրապները: Անտիոքոս Երրորդ Մեծը Հայաստան ուղարկեց իր զորավարներին՝ Արտաքսիասին (Արտաշես) եւ Զարիադրիսին (Զարեհ)[30]: Պոլիբիոսը (1-6) հաղորդում է, որ «Քսերքսեսի (մոտ մ.թ.ա. 220-201 թթ.) թագավորության ժամանակ Արմոսատա (Ծոփքի մայրաքաղաք Արշամաշատ)[31] քաղաքում, որը գտնվում է այսպես կոչված Գեղեցիկ դաշտում[32], Եփրատի եւ Տիգրիսի միջեւ, Անտիոքոս թագավորը քաղաքը պաշարելով վերցնելու մտադրությամբ բանակվել էր նրա մոտ

24 Տե՛ս **Г. Бенгтсон**, "Правители эпохи эллинизма", էջ 219-221 **Գ. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 44:

25 Տե՛ս **Г. Бенгтсон**, նշվ. աշխ., էջ 220-221, 230-235. **А. Б. Ранович**, Эллинизм и его историческая роль, М.-Л., 1950, էջ 123. **Գ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 45-46:

26 Տե՛ս **Г. Бенгтсон**, էջ 220-221:

27 Տե՛ս անդ, էջ 230-231:

28 Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 43-44:

29 Տե՛ս ՀԺՊ, I, էջ 523:

30 **Strabo,** XI, XIV, 5. "Словарь Античности, Перевод с немецкого", М. 1989, Артаксата (էջ 51). **Э. Бикерман**. Государство Селевкидов. Էջ 156:

31 Հիմնադրել է Արշամ թագավորը մ. թ. ա. Գ. դ. 40-30-ական թվականներին:

32 Արածանիի հովիտն է, այժմյան Խարբերդի դաշտը:

(մ.թ.ա. 212-205 թթ.)[33]... թագավորը իր մոտ հրավիրեց պատանուն, հաշտվեց նրա հետ եւ նույնիսկ զիջեց նրան հարկի մեծագույն մասը, որը պարտավոր էր իրեն վճարել (Քսերքսեսի) հայրը: Այնուհետեւ ստանալով Քսերքսեսից 300 տաղանդ, հազար ձի ու հազար ջորի լծասարքով, նա նրան վերադարձրեց ամբողջ իշխանությունը եւ նրան ամուսնացրեց իր Անտիոքիս քրոջ հետ: Այսպիսով, Անտիոքոսը իր արքայական արժանապատվությամբ, որ ցուցաբերել էր այս դեպքում, ձեռք բերեց երկրի բնակիչների համակրանքը, բարեկամությունն ու երաշխիքը[34]»:

Ըստ Մովսես Խորենացու՝ զինաբախումներ են տեղի ունենում Երվանդի եւ Արտաշեսի միջեւ. « Իսկ Երուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի խանս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգուցէ փախչել: Եւ քաջին Սմբատայ զհետ մտեալ՝ սաստկագոյնս վարէր զնա ի գիշերի մինչեւ զդուռն քաղաքին: Եւ Մարաց զօրացն անցեալ ի կողմն երուանդական գնդին, նսեմաւ ի վերայ դիականցն բանակէին: Իսկ Արտաշիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն, ի կաշեայ եւ ի կտաւեայ պարսպին, էջ, եւ ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր: Եւ այգուն եղելոյ՝ տիրաբար արարեալ, զսպանեալսն թաղել հրամայեաց. եւ անուանեաց զհովիտն, ուր ի վերայ դիականցն բանակեցաւն՝ Մարաց Մարգ, եւ զտեղի ճակատուն՝ Երուանդաւան, որ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի. Այս ինքն եթէ յայսմ տեղւոջ վանեաց զԵրուանդ»: «Բայց Սմբատայ գիշերային զհետ Երուանդայ եկեալ սակաւ՝ վաշտկանաւ զդուռն քաղաքին պահէր մինչեւ ի գալն Արտաշիսի եւ զօրացն ամենեցուն: Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եղեն մարդիկ ամրոցին, եւ բացին զդուռն քաղաքին: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերբ զգլուխն Երուանդայ, եւ ցրուեաց զուղիւղն ի յատակս տանն, եւ այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան[35]»:

Անտիոքոս Երրորդ Մեծի արեւելյան հաջող արշավանքից հետո, ինչպես վերն ասվեց, կայսրության հիմքերն ամրապնդվեցին: Ուստի նա որոշեց լուծել նաեւ կայսրության արեւմտյան խնդիրները: Փոքր Ասիայի երկրներին հնազանդեցնելով՝ նա անցավ Հունաստան: Այստեղ նա չկարողացավ դիմակայել հռոմեական բանակին: Մ. թ.ա. 191 թ. Անտիոքոս Երրորդ Մեծի նավատորմը Թերմոպիլում հռոմեացիներից ջախջախիչ պարտություն կրեց: Մ.թ.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս Երրորդ Մեծը, չնայած հռոմեական բանակից կրկնակի ավելի զորքերին, դարձյալ խայտառակ պարտություն կրեց[36]:

---

33 Ամենայն հավանականությամբ՝ հենց մ. թ. ա. 212 թ.:

34 Տե՛ս **Պոլիբիոս**, Պատմություն, գիրք VIII, 25; «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հատ. 1, Երեւան, 1981, էջ 192:

35 **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւն Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, II, խԶ. **Strabo**, XI, XIV, 15:

36 **Г. Бенгтсон**, նշվ. աշխ., էջ 220. ՀԺՊ I, էջ 516:

Չնայած Անտիոքոս Երրորդ Մեծի կրած պարտություններին՝ նա նշանավոր կառավարիչ էր ու զորավար: Անտիոքոս Երրորդը լիակատար իրավունք ուներ «Մեծ» անունը կրելու: Կասկածից վեր է, որ նրան կարելի է դասել հելլենիստական շրջանի խոշորագույն արքաների շարքին: Միայն հռոմեացիները կարողացան կանգնեցնել նրան[37]: Մ.թ.ա. 188 թ. Ապամեայի պայմանագրով փաստորեն ազդարարվում է Սելեւկյան կայսրության անկման սկիզբը[38]: Արտաշես Առաջինը եւ Զարեհը, որոնք նախկինում Անտիոքոս Երրորդ Մեծի զորավարներն էին եւ նրա կողմից Արտաշես Առաջինը՝ Մեծ Հայքի, Զարեհը՝ Ծոփքի ստրատեգոսներ էին կարգվել, պատերազմին չմասնակցեցին: Պատերազմի ելքից օգտվելով՝ նրանք մ.թ.ա. 189 թ. անցան հռոմեացիների կողմը եւ իրենց հռչակեցին անկախ թագավորներ: Տարածքով ամենաընդարձակը Մեծ Հայքն էր: Հույն պատմիչ Պոլիբիոսը նշում է. «Հայաստանի մեծ մասի տիրակալ Արտաշեսը»[39]:

Արտաշես Առաջինը (մ.թ.ա. 189-160 թթ.), քաջատեղյակ լինելով Սելեւկյան կայսրության, Անտիոքոս Երրորդ Մեծի կառավարման ձեւերին, երկրի տնտեսության, բանակի կառուցվածքին, հետեւեց նրանց օրինակին: Նա նույնպես իրեն երկնային հովանավոր աստված ընտրեց Ապոլոնին: Հայկական աստվածները, որոնք մինչ այդ ստացել էին իրանական անուններ, ունեցան նաեւ հունական անուններ, համադրվեցին նրանց հետ՝ Ապոլոնը՝ Արեգ-Միհրի, Արտեմիսը՝Անահիտի, Աֆրոդիտեն՝ Աստղիկի, Արամազդը՝ Զեւսի, Վահագնը՝ Հերակլեսի եւ այլն: Արտաշես Առաջին արքայի գահակալության օրոք Հայաստանում ընդունվում է մակեդոնական տոմարը: Ստրաբոնը, Պլուտարքոսը հաղորդում են, որ Մագնեսիայի ճակատամարտից անմիջապես հետո Արտաշեսի արքունիքում ապաստանել էր Անտիոքոս Երրորդ Մեծի խորհրդական, նշանավոր զորավար, Հռոմի ոխերիմ թշնամի Հաննիբալը: Պատմաբան Ի. Շիֆմանը ենթադրում է, որ Ստրաբոնը (XI, XIV, 6) եւ Պլուտարքոսը (Luc. XXXII) պատճառ չունեին կեղծելու եւ Արտաշատի հիմնադրումը կապելու Հաննիբալի անվան հետ: Նա գտնում է, որ Արտաշատը հիմնադրվել է մ. թ. ա. 189/8 թթ.[40]: Ընդունելի է Ի. Շիֆմանի կարծիքը, որ Հաննիբալն իրոք կարող էր լինել Հայաստանում եւ Արտաշես Առաջինի արքունիքում կատարել խորհրդականի դեր: Արտաշես Առաջինը Անտիոքոս Երրորդ Մեծի զորավարներից էր եւ հռչակավոր զորահրամանատար Հաննիբալի հետ պետք է որ արքունիքում ծանոթացած լիներ: Հաննիբալը Հռոմի ոխերիմ թշնամին էր: Նա ըմբռնում էր, որ հաղթանակից հետո հռոմեացիների առաջին պահանջը պետք է լիներ իրեն

37 Տե՛ս **Г. Бенгтсон** , Антиох III Великий, էջ 247:

38 **Polib**, XXV, 2, 12. **Ժ. Խաչատրյան**, Մեծն Արտաշես Առաջինը..., էջ 4:

39 **Polib,** XXV, 6. **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն..., էջ 120:

40 Տե՛ս **И. Ш. Шифман**. Ганнибал в Армении. ИФЖ. 1980, N 4, с. 257-261. նաեւ Diod., XXXI, 17a. **Ժ. Դ. Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունը ըստ Մովսես Խորենացու Հայոց պատմության, ՊԲՀ, 1998, թ. 1-2, էջ 181, ծան. 5:

նրանց հանձնելը: Պատահական չէ, որ վերջինս ապաստանեց Արտաշեսի արքունիքում:

Հաննիբալը քաջածանոթ էր Սելեւկյան եւ ժամանակի ամենահզոր՝ հռոմեական բանակի մարտավարությանը: Ուստի, առաջին հերթին վերակազմավորվելու էր հայկական բանակը[41]: Դա օգնելու էր Արտաշեսին հարեւան երկրներից գրավելու 16 նահանգ եւ միացնելու Մեծ Հայքին: Արտաշեսը անցավ նաեւ Կուր գետի ձախ ափը ու նվաճեց տարածքներ: Այդ առիթով Ստրաբոնը գրում է. «Պատմում են, Արմենիան եղել է առաջ փոքր եւ մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) եւ Զարիադրիսի (Զարեհի) ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին եւ նրա անկումից հետո թագավորեցին՝ Զարեհը՝ Ծոփքի, Ակիլիսենեի, Օդոմանտիսի եւ մի քանի այլ գավառներում, Արտաշեսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա: Սրանք ընդարձակեցին իրենց երկրների սահմանները եւ գրավեցին շրջակա ժողովուրդներից հետեւյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը եւ Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորձենեն եւ Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս ափին, Խալյուբներից եւ Մոսինոյկներից՝ Կարենիտիսը եւ Դերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, Կատաոններից՝ Ակիլիսենեն եւ Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը եւ ասորիներից՝ Տամորիտիսը: Այնպես, որ բոլորը միալեզու եղան»[42]:

Հաննիբալը կարող էր օժանդակել նաեւ Արտաշատ մայրաքաղաքի տեղի ընտրությանը, ընդհանուր գծերով ներկայացնել հատակագիծը, սկզբնական շրջանում մասնակցել շինարարական աշխատանքներին: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Արտաշատի՝ ուրարտական միջնաբերդի պարիսպը եւ այլ շինություններ այդ ժամանակ պետք է տակավին բավական լավ պահպանված լինեին: Ինչ վերաբերում է Հաննիբալի՝ Հայաստանից վաղ հեռանալուն, ապա, ակներեւաբար, պատճառներից մեկն այն է, որ մ. թ. ա. 188 թ. Ապամեայի հաշտության պայմանագրի կետերից մեկը Հաննիբալին հռոմեացիներին հանձնելն է: Մագնեսիայի ճակատամարտից հետո Արտաշեսը բարեկամական հարաբերությունների մեջ էր հռոմեացիների հետ[43] :

Արտաշեսյան արքայատան վերականգնողը՝[44] Արտաշես Առաջինը (մ.թ.ա. 189-160 թթ.), Հայաստանի քաղաքական, պետական ու ռազմական ամենախոշոր գործիչն էր, որը, սակայն, պատմագիտության մեջ չի ստացել իր արժանի գնահատանքը[45]: Արտաշես Առաջին արքայի օրոք ձեւավորվեց պատմական Մեծ Հայքը Հայկական լեռնաշխարհում: Այն ընդգրկում էր Հյուսիսա-

41 Տե՛ս **И. Ш. Шифман**. նշվ. աշխ., էջ 259:

42 **Strabo**, XI, XIV, 5. Ստրաբոնի եւ Պլուտարքոսի թարգմանության տեքստերը առնված են Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատասիրությունից:

43 Տե՛ս **Strabo**, XI, XIV, 15.

44 Տե՛ս **Ս. Մ. Կրկյաշարյան**, Երվանդունի արքայատոհմը Հայաստանում, ՊԲՀ. 1973, թ. 4, էջ 179-185:

45 Տե՛ս ՀԺՊ, I, էջ 526-537:

յին Միջագետքից մինչեւ Կուր գետը, նույնիսկ Կուր գետի ձախափնյա տարածքները, ինչպես վերը նշեցինք[46], Ատրպատականից մինչեւ Ծոփք եւ Փոքր Հայք ընկած տարածքները: Հույն եւ լատին մատենագիրների վկայությունների հետեւողությամբ Ղեւոնդ Ալիշանը, անդրադառնալով Արտաշես Առաջին հզոր թագավորի աշխարհակալ արքա լինելու հանգամանքին, գրել է. «Հույն եւ լատին հեղինակաց պատմածներն Տիգրանայ՝ Արտաշեսի որդւոյն վրայ, հաւատալի կընեն հօրն աշխարհակալութիւն, թէ եւ պարագաներն անծանօթ: Յոյն չաստուածոց այլ կողոպտելով ի Հայս բերելուն՝ մեծ հաւաստիք եղաւ մեր օրերուս...»[47]: Հ. Մանանդյանը նույնպես նշում է, որ թեեւ «աղբյուրների աղքատիկ ու պատահական տեղեկությունները չեն տալիս, իհարկե, պարզ ու լրիվ պատկեր այն մեծ շրջադարձի, որ տեղի էր ունեցել Արտաշես Առաջինի ժամանակ, սակայն կցկտուր հիշատակություններն անգամ ցույց են տալիս, որ Արտաշեսյան անկախ ու հզոր Հայաստանի կազմավորումը սկիզբն էր Հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի»[48]:

Արտաշես Առաջինի գլխավորությամբ Մեծ Հայքն այնքան հզորացավ ու ընդարձակվեց, որ դարձավ տարածաշրջանի հզոր տերություններից մեկը: Վերջինիս հետ հաշվի էին նստում պատերազմական ընդհարումների եւ միջպետական հարաբերությունների ժամանակ: Արտաշես Առաջինը Առաջավոր Ասիայի խոշորագույն պատմական դեմքերից մեկն է[49]: Վերոհիշյալ նվաճումների շնորհիվ երկիրը հարստացավ, ամրապնդվեց տնտեսական հիմքը, շատացավ աշխատուժը, կատարվեցին արմատական մի շարք բարեփոխումներ: Մովսես Խորենացին Արտաշես Առաջինի մասին հաղորդած տեղեկություններում մատնանշում է, որ հայերը, որոնք «...մեծամեծ արուեստից եւ ի գիտութեանց ունայնացեալք, եւ այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, եւ կամ ոչ հասեալք, զշաբաթուց ասեմ եւ ամսոց եւ զտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց ազգաց վարելով. եւ ոչ ի ծովակս աշխարհիս նավագնացութիւնք, եւ ոչ ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք, եւ ոչ գործիք ձիանց որսոց. Այլ եւ ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց դոյզն ուրեք, այլ ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերութեամբ եւ այլովք այսպիսեօք կեցեալք: Եւ այս ամենայն յօրնի յաւուրս Արտաշիսի»[50]: Այսինքն՝ հայերն սկսել էին առաջընթացով ավելի արագ զարգանալ՝ շնորհիվ Արտաշես Առաջինի նորոգչական գործունեության[51]:

Մեր համոզմամբ՝ Հին Հայաստանում չորս կարեւոր տոների սահմանումը պատկանում է Արտաշես Առաջինին: Այդ մասին վկայում է Մծբնեցին, երբ

46 **Strabo**, XI, XIV, 5.

47 **Ղ. Ալիշան**. Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 38, ծան. 4:

48 **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 127:

49 ՀԺՊ, I, էջ 545-546. **Հ. Մանանդյան**, անդ, էջ 127:

50 **Մովսէս Խորենացի**, II, ԾԹ.:

51 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 134:

գրում է. «Սովորութի է մեծամեծ թագաւորաց որ է տարին չորս տօն կատարեն՝ նախ ծննդեան իւրեանց: Երկրորդ՝ յորժամ յաղթուի կատարեն: Երրորդ՝ յորժամ պսակեն զթագաւորն: Չորրորդ՝ յորժամ քաղաք շինեն»[52]: Արդ՝ այդօրինակ տոնակատարությունների արձագանք չե՞ն արդյոք Ագաթանգեղոսի՝ Խոսրով թագավորի պարսիկների դեմ տարած հաղթանակին նվիրված նկարագրությունները. «Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ եւ բազում աւարաւ եւ ցնծալից ուրախութեամբ ի կողմանսն Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ եւ բարի անուամբ եւ բազում աւարաւ»: Այնուհետեւ՝ «Ապա հրաման տայր ընդ կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենից ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման: Սպիտակ ցլուք եւ սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք եւ սպիտակ ջորւովք, ոսկեղէն եւ արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն եւ ոսկովք պսակօք եւ արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք ոսկով եւ արծաթով, ի հանդերձս պայծառս եւ ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր: Նա եւ հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, եւ մեծամեծ պարգեւս քրմացն շնորհէր: Իսկ զօրացն որ զիւրեաւն էին՝ ետ պարգեւս եւ արձակեաց յիւրմէ»[53]: Թե որքան կարեւոր է եղել քաղաքաշինությունը, քաղաք հիմնարկելը, որին տոն է սահմանվել, հավաստում է Մծբնեցին:

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո հելլենիստական աշխարհում սկսված «ուրբանիզացիայից» Հայաստանը զերծ չմնաց: Արտաշես Առաջինը, լինելով Անտիոքոս Երրորդ Մեծի զորավարը, այնուհետեւ Մեծ Հայքի ստրատեգոսը (կառավարիչը), պետք է առաջնորդվեր Սելեւկյան կայսրության մշակույթի սկզբունքներով: Նա ակներեւաբար տեսել էր կայսրության մայրաքաղաք Անտիոքը, Դափնան, Տիգրիսի վրայի Սելեւկիան եւ այլն: Պլուտարքոսն ասում է, որ Ալեքսանդրը կառուցել է 70 քաղաք, սակայն ենթադրություն կա, որ նա հիմնադրել է 20 քաղաք: Ենթադրվում է, որ Արեւելքում հունական քաղաքները կառուցել են սելեւկյանները[54]: Համարվում է, որ Սելեւկոսը հիմնադրել է 75 քաղաք[55]: Անտիկ պատմագրությունը հավաստում է, որ միասնական, կանոնավոր հատակագծով քաղաքի կառուցման հիմնադիրն ու տարածողը Հիպոդամն է[56]: Քաղաքաշինությունն ընդհանրապես մշակույթի, արվեստի ընդհանուր համակարգում հատուկ տեղ է զբաղեցնում: Այն

52 «Գիրք որ կոչի Զգոն արարեալ սրբոյն Յակոբոյ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի, ըստ խնդրոյ սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչի...», Հռոմ, 1756, էջ 31:

53 «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», քննական բնագիր Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ս. Կանայանցի, Երեւան, 1983,§ 21, 22:

54 Տե՛ս **Г. А. Кошеленко.** Греческий полис на эллинистическом Востоке. М., 1979, էջ. 54, 85-93:

55 Տե՛ս անդ, էջ 54, ծան. 87:

56 Տե՛ս **Диод**., XII, 10:

անմիջականորեն արտացոլում է երկրի քաղաքական, ընկերային-տնտեսական բարգավաճման հիմնական գծերը, տվյալ բնագավառի ավանդույթների առաջընթացը, ավանդականի եւ նորի փոխգործակցությունը, տարածական կառուցվածքը եւ արտահայտում է հասարակության ինչպես նախկին, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանի զարգացման մակարդակը[57]: Քաղաքաշինության մեջ արտացոլվում են տվյալ հասարակության գեղարվեստական մշակույթի ամենաբնորոշ հատկանիշները: Հելլենիստական շրջանում պետական լայնախոհ քաղաքականության միջոցով, նախապես մտածված ընդհանուր հատակագծով կառուցված քաղաքներն ստանում էին դինաստիական անուններ[58]:

Արտաշես Առաջինը իր եւ հոր անունով կառուցել է Արտաշատը, Արշատը (Նախիջեւանում՝ Երասխի ափին ժամանակակից Շախթախտի), Նորշիրականի Զարեհավանը, Բագրեւանդի Զարեհավանը, Հավնունիքի Զարեհավանը, Աղիովիտի Զարիշատը, Վանանդի Զարիշատը եւ այլն[59]:

Արտաշես Առաջինի կարեւորագույն արարումներից ամենավիթխարին միավորված Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի (Artaxiasata, Artaxata, Արտաշեսի ուրախություն) հիմնադրումն էր, Արտաշես Առաջինի շինարարական գործունեության թագ ու պսակը:

Արտաշեսը մայրաքաղաքը կոչեց իր անունով, իսկ Ապոլոնի հսկայական տաճարը, Սելեւկոսի օրինակով, կառուցեց քաղաքից դուրս, Երասխի ափին, ճանապարհի մոտ: Արտաշատը գտնվում էր Արարատյան հովտում, շքեղաշուք Արարատ լեռան դիմաց, Երասխ եւ Մեծամոր գետերի միախառնման տեղում ստեղծված թերակղզու տասներեք մեծ ու փոքր բլուրների վրա, միջազգային առեւտրական բանուկ ճանապարհների խաչմերուկում: Տեղանքի անթերի ընտրությունը կատարված էր թե՛ ստրատեգիական եւ թե՛ տնտեսական առումով: Տեղանքը համապատասխանում էր բոլոր այն պահանջներին, որոնք, ըստ անտիկ հեղինակների, անհրաժեշտ էին քաղաքի կառուցման համար: Պատահական չէ, որ Արտաշատի շքեղության եւ մեծության մասին վկայում են Ստրաբոնը, Պլուտարքոսը, Տակիտոսը, Մովսես Խորենացին: Արտաշատը 670 տարի Հայաստանի մայրաքաղաքն էր (մ. թ. ա. 189-մ. թ. 452 թթ.) եւ դարձավ Հայաստանի անկախության եւ հզորության խորհրդանիշը: Արտաշատ մայրաքաղաքի կառուցումն է հիշատակում Մովսես Խորենացին (II, ԽԹ.): Այն քաղել է «ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան, շինել քաղաքն»: Այսինքն, Արտաշեսյան շրջանի կարեւոր իրադարձությունները պատմել են վիպասանները («որ պատմին ի Գողթան») եւ սերնդե սերունդ վերածայնվելով՝ հասցրել

57 Տե՛ս **Геннадий Кошеленко**, **Арам Акоян**, Градостраительство Армении и градостраительство Парфии. Второй Международный симпозиум по Армянскому искусству, Ереван, 1978, էջ 1:

58 Տե՛ս **Геннадий Кошеленко**, Градостраительная структура “идеального” полиса (По Платону и Аристотелью) ВДИ, М. 1975, N թ. 1, էջ 22:

59 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երեւան, 1963, էջ 33, 52:

է Ե. դար: Մանուկ Աբեղյանը գրում է. «Այդ դարերում արդեն Արտաշեսի տերությունը ձգտել եւ հաջողել է առաջ բերել Հայաստանի զանազան մասերի միացում, եւ Արտաշատը դարձել է ընդհանուր կենտրոն»[60]:

Հայաստանի անկախ պետականության վերականգնումը սատրապ Երվանդի կողմից եւ հելլենիստական քաղաքակրթության տարածումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին երկրի հետագա առաջընթացի համար: Հելլենացմանը նպաստեց նաեւ այն, որ մ.թ.ա. Դ. դ. վերջին-Գ. դ. սկզբին եւ մ.թ.ա. Գ. դ. վերջին Հայաստանը կարճ ժամանակով գտնվեց սելեւկյանների ազդեցության տակ: Հ. Մանանդյանը գտնում է, որ Սելեւկյանները Հայաստանին տիրել են ժամանակ առ ժամանակ, այն էլ ընդամենը հարկեր են պահանջել[61]:

Երկրի ներքին զարգացումը՝ ընկերային-տնտեսական եւ մշակութային առաջընթացը, նախադրյալներ ստեղծեց քաղաքայնացման համար: Այդ ընթացքում աշխուժացան ուրարտական նախկին քաղաքները՝ Տուշպան (Վան), Էրեբունին (Երեւան), Արգիշտիխինիլին (Արմավիր) եւ այլն: Վերջինս դարձավ Երվանդունիների նորանկախ Հայաստանի մայրաքաղաքը եւ պաշտամունքային կենտրոնը: Այն զբաղեցնում էր ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի արեւելյան (Արմավիր բլուրը), պաշտամունքային հատվածը: Արարատյան հովիտը դառնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կենտրոնը:

Նոր քաղաքներն առաջին հերթին հիմնադրվում են Ծոփքի, Կոմագենեի տարածքում՝ Սամոսատը՝ Եփրատ գետի աջ ափին, Սամոկրատը՝ Աղձնիքում: Դա պատահական չէր. Ծոփքը գտնվում էր Սելեւկյան պետության անմիջական հարեւանությամբ, եւ այնտեղով էր անցնում առեւտրական հին «արքայական ճանապարհը»: Մ.թ.ա. Գ. դ. 40-ական թվականներին Արածանիի մոտ կառուցվում է Արշամաշատ քաղաքը, Տիգրիսից ոչ հեռու՝ Կարկաթիոկերտը[62]:

Արտաշեսի խնդրանքով Հաննիբալը կարող էր օգնել նաեւ Արտաշատ մայրաքաղաքի տեղի ընտրության հարցում, ընդհանուր գծերով ներկայացնել հատակագիծը եւ նույնիսկ սկզբնական շրջանում մասնակցել աշխատանքներին: Մանավանդ եթե նկատի ունենանք, որ Հաննիբալը կարող էր տեսած լինել Արտաշատի ուրարտական միջնաբերդի պարիսպները եւ այլ շինություններ: Դրանք այդ ժամանակ պետք է դեռեւս ավելի լավ պահպանված լինեին, քան 1985-1986 թվականներին[63]: Ինչ վերաբերում է Հաննիբալի՝ Հայաստանից

60 **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Ա., Երեւան, 1966, էջ 156-161:

61 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, «Երկեր», Ա., Երեւան, 1977, էջ 106:

62 Տե՛ս ՀԺՊ, I, էջ 516-517. **Я. А. Манандян**. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. V в. до н. э.-XV в. н. э., Ереван, 1954, с. 30-35. **С. Т Еремян**, Развитие городов и городской жизни в древней Армении. ВДИ, 1953, էջ 13-31:

63 Տե՛ս **Ժորես Խաչատրյան**, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները. ՊԲՀ, 1987, թ. 4, էջ 160-168, նկ. I-IV:

շուտ հեռանալուն, ապա նա գիտեր, որ մ.թ.ա. 188 թ. Ապամեայի հաշտության պայմանագրից հետո Արտաշեսը բարեկամական հարաբերությունների մեջ էր հռոմեացիների հետ եւ չէր կարող իրեն չհանձնել[64]:

Մեծ Հայքը ընդլայնվելուց հետո, երբ երկիրը բազմամարդ դարձավ եւ հարստացավ, Արտաշես Առաջինը տնտեսական կարեւոր բարեփոխումներ իրականացրեց: Հողերը բաժանեց եւ մարդահամար իրականացրեց: Մովսես Խորենացին այդ առիթով գրում է. «Յետ ամենայն առաքինութեանց եւ գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից եւ ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լերինս եւ ի հովիտս եւ ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, եւ պնակաձեւ փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. եւ չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»: Նաեւ «Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային եւ ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»[65]: Այդ են հավաստում նաեւ Արտաշես Առաջինի կանգնեցրած սահմանաքարերը (նկ.1,2)՝ վկաները նաեւ Արտաշես Առաջինի ծագումնաբանության եւ պատվատիտղոսների: Հայտնաբերված սահմանաքարերի թիվը Հայաստանի Հանրապետության տարածքում այսօր 16 է: Ընդլայնվել է դրանց աշխարհագրությունը՝ Գեղարքունիք՝ Կարմիր, Ալբերդ, Վաղաշեն, Լիճք, Ծակքար եւ այլուր[66], Սյունիք՝ Իշխանասար, Սիսիան-Գորիս ճանապարհ, Դիլիջանի եւ Իջեւանի միջեւ գտնվող Թեղուտ գյուղից, Սպիտակի մերձակայքից եւ այլուր: Կոթողները բազալտ քարից են, դեպի վեր լայնացող, վերեւում երեք կլորավուն ատամներով, ներքեւում քարի (ժայռի) մեջ ամրացնելու պոչուկով, որպեսզի ուղղահայաց դիրքով լինի: Հայաստանի արտաշիսյան սահմանաքարերի վրայի արամեերեն արձանագրությունները նման են փոքրասիական արձանագրություններին[67]: Արամեերենը Հայաստանում եղել է պետական պաշտոնական լեզու: Արամեերեն արձանագրությունների բովանդակությունը տարբեր է: Այսպես, «Արտաշես արքան՝ Զարեհի որդին Երվանդական, բաժանեց հողը մասերի (բաժիններ)»[68]: «Արտաշես արքա Երվանդունի վեհը, որդի Զարեհի, բաժանող հողը, այստեղ (այսինչ) գյուղի մեջ», «Արտաշես արքա «Բարի» Երվանդական Զարեհի որդի եւ թագադիր Նիկեփորը (կամ Նեկփառը) Ախշահիրսարտի որդին»[69]:

64 Տե՛ս **Strabo**, XI, 14,15:

65 **Մովսէս Խորենացի**. II, ԾԶ.:

66 Տե՛ս **A. Perikhanian**. Les inscrintions, araméennes du roi Artachés. "Revue des Etudes Araméniennes". 1971, n, VIII, S 169- **Գ. Տիրացյան**. Արտաշես I-ի եւս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն.ՊԲՀ, 1977, թ. 4, էջ 254-259:

67 Տե՛ս **А. Я. Борисов,** Надписи Артаксия (Арташеса), царя Армении**.** ВДИ, 1946, թ. 2, էջ 98-100:

68 **Գ. Ա. Տիրացյան**. Արտաշես Ա.-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1957, թ. 10, էջ 107:

69 **А. Г. Периханян,** Арамейская надпись из Зангезура. ՊԲՀ, 1965, թ. 4 եւ այլն:

Այսինքն, Արտաշես Առաջինը հրամայում է հողաբաժանություն կատարել գյուղի մեջ եւ որոշել գյուղերի եւ ագարակների սահմանները: Արձանագրություններից պարզ է դառնում նաեւ, որ նա Զարեհի որդին է, իրեն համարում է Երվանդական, որ ինքն օրինական թագավոր է: Արձանագրություններում հելլենիստական մյուս երկրների արքաների նման նշվում են Արտաշես Առաջինի պատվատիտղոսները: Արտաշես Առաջինը Թեղուտի եւ Զանգեզուրի վիմագիր հիշատակարանների ընդարձակ տիտղոսաշարում իրեն անվանում է «թագակիր, «հաղթական», «իշխանությամբ օժտված»: Քսանթոսի եռալեզու արձանագրության այս մակդիրը (հունարեն, արամեերեն, լիկիերեն) Վ. Լիվշիցը մեկնում է որպես Միհր-Ապոլոնի հովանավորության տակ գտնվող[70]:

Արտաշես Առաջինը տերության կայունության, անվտանգության, դավադրություններից զերծ պահելու համար կարգ է սահմանում, որ Այրարատում՝ մայրաքաղաքում՝ արքունիքում, իրավունք ունի ապրել միայն թագաժառանգը: Մյուս արքայազները եւ հարազատները պետք է բնակվեին եւ հուղարկավորվեին մայրաքաղաքից հեռու՝ Վանա լճի հյուսիսային հատվածում՝ Աղի գետի ափին կառուցված Զարիշատ քաղաքում, որին տրվել է «արքունի քաղաքի» կարգավիճակ եւ արեւմտյան մասում քաղաքային տարածք[71]: Վերջինս «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Տաւրուբերան «աշխարհի» գավառ. «Հայոց թագաւոր Արտավազդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր եւ զքորս ի գաւառս Աղւոյ ովտի եւ Առբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ առանձինն մտիցտ եւ ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն եւ առաւել թագաւորազն քան զայնս Արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»[72]: «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորայ եւ հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ եւ Առբերանոյ, զի մի՛ բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»[73]: «Եւ եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն «Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի եւ Առբերանոյ: Իսկ սոցա առաւել եւս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ որ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝

70 Տե՛ս **В.А. Лившиц.** Трилингва из Ксанфа и надписи Артаксия. VIII всесоюзная конференция по Древнему Востоку, посвещенная памяти акад. В.В. Струве. Тезисы докладов . М., 1979, էջ 54-55. **А. Г. Периханян,** Материалы к этимологическому словарю древнеармянского языка. Ч. I, Ереван, 1993, էջ 6:

71 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երեւան, 1963, էջ 33, 52:

72 **Մովսէս Խորենացի**. II, ԻԲ.:

73 Անդ, II, ԿԱ.:

1. Գավգամելայի ճակատամարտը.
Ալեքսանդր Մակեդոնացի և Դարեհ Կոտոմանոս

2. դիմ.- Ալեքսանդր Մակեդոնացի,
դարձերես- Զևս

7. Արտավազդ II
(կնքադրոշմ)

3.Սելևկոս Նիկատոր

4.Անտիոքոս III Մեծ

9.Արտաշես II
(թագաժառանգ, կնքադրոշմ)

6.Տիգրան II Մեծ (ա-դիմերես),
(բ-դարձերես) Տիխե

8.Արտավազդ II (ա-դիմերես), (բ-դարձերես) քառաձի կառք

10. Դիմերես- Արտաշես II, դարձերես- առատության եղջերու

սահմանաքարերեր

հաւասար տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի եւ Առբերանւոյ»[74]:

Հիշյալ երեք գավառներում՝ Հաշտյանքում, Աղիովտում եւ Առբերանում, բնակվելու էին Արշակունի սեպուհները (կրտսեր նախարարները), որոնք համարվում էին «սեպուհական» (սեպհական): Երբ Գնելը խախտում է ընդունված կարգը եւ գնում է Կուաշ ավան՝ իր կուրացած պապի՝ Տիրանի մոտ, պապը նրան է տալիս իր ամբողջ ունեցվածքը եւ կարգադրում ապրել Կուաշ ավանում, որը գտնվում էր Այրարատում: Դա հաղորդում են Արշակին՝ ասելով, որ Գնելն ուզում է սպանել նրան: Արշակը, հավատալով Տիրիթին, Վարդանին ուղարկում է Գնելի մոտ. թե «ընդէր բնակեցար յԱյրարատ եւ լուծեր զկարգ հայրենեաց (քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ եւ միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, եւ այլոց Արշակունեաց բնակել ի գաւառս Հաշտենից եւ Աղիովտի եւ Առբերանւոյ, հանդերձ ռոճկօք եւ մտիւք յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի է քեզ կամ ընդունել զմահ, կամ գնալ յԱյրարատայ, եւ արձակել ի քէն զուստերս նախարարացդ»: Զայս լուեալ Գնելոյ՝ արար զհրամանս արքայի եւ գնաց յԱղիովիտ եւ յԱռբերանի»[75]:

Գնելին սպանությունից հետո հուղարկավորում են Զարիշատում. «Իսկ Արշակայ հանդերձ նախարարօքն իջուցեալ ի դաշտն Աղիովտի զդին Գնելոյ թաղեաց յարքունական քաղաքին Զարիշատի. ի չքմեղս եղեալ՝ կոծ առնէ»[76]: Հնարավոր է՝ այդ ավանդույթը գալիս է դեռեւս ուրարտական շրջանից, որը շարունակվել է Երվանդունիների, Արտաշիսյանների, Արշակունիների օրոք: Թերեւս հավաստի է, որ այդ կարգը սահմանվել է Արտաշես Առաջինի կողմից: Զարիշատը Արտաշես Առաջինի կառուցած քաղաքներից էր, որն իր հոր անունով կոչեց Զարիշատ:

Արտաշես Առաջինի թաղման պատկերավոր նկարագրությունից հետո Մովսես Խորենացին (II, ԿԱ.) գրում է. «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտավազդ որդի նորա, եւ հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ եւ Առբերանոյ, զի մի՛ բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի»[77]: «Պատմի եւ այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, եւ զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս»[78]: Այս վկայութ-

74 Անդ, II, ԿԲ.:
75 Անդ, II, ԻԲ.:
76 Անդ, II, ԻԳ.:
77 Անդ, II, ԿԱ.:
78 Անդ, II, Լ.:

յունը հիշեցնում է Զարիշատ քաղաքը, քաղաքային տարածքը եւ բնակիչներին տրված կարգավիճակը: Արցախի Տիգրանակերտի կարգավիճակը եւս մեկ անգամ վկայում է, որ տիրակալ արքայի հարազատները բնակվելու էին Այրարատ գավառից հեռու: Բնականաբար, այդ բարեփոխումը եղել է մինչ Տիգրան Մեծը[79]: Կասկածից վեր է, որ այն Արտաշես Առաջինի բարեփոխումներից է:

Արտաշես Առաջինին փառաբանել է Թ. դ. մատենագիր Թովմա Արծրունին: Պատմիչը, որ երկնելու էր «Արծրունյաց տան պատմությունը», ավետում է, որ Արտաշեսը շինարարական աշխատանքներ է կատարել Վանում. «Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով»: «Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, եւ առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն՝ լնուլ այգեստան տնկախիտ պատրաստութեամբ ականախիտ վայելչութեամբ»: «Եւ իբրեւ կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին եւ անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց՝ կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին»: «Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ Արտաշէսի եկք, զի ըստ Պարսիկ ձայնի Մատ՝ Եկք թարգմանի»[80]:

Արտաշատի շուրջը խմբված պատմական երգերն ու զրույցները, իրենց մեջ ընդունելով եւ ուրիշ ավանդություններ, ձգտել են «համազգային» դառնալ, այդպիսով առաջ է եկել մի ընդհանուր վիպասանություն: Հայոց հին Վիպասանքն, ուրեմն, կազմվել ու զարգացել է Հայաստանի կենտրոնական իշխանության առկայությամբ: Երկրի իշխանության միավորումը առաջ է բերել եւ վիպական նյութերի մեկտեղում: Այդ անհրաժեշտ է եղել Արտաշատի թագավորների համար»[81]: «Դարեր շարունակ խաղաղ ու միակերպ ապրելուց հետո հայ ժողովուրդն ապրում է իսկապես մի եռուն դյուցազնական շրջան, որի պատմական նշանավոր անձերն ու դեպքերը Արտաշես Առաջինն էր իր հիմնած թագավորությամբ, Մեծն Տիգրանն իր անձով եւ մյուս Արտաշեսներն ու Արտավազդները եւ Տրդատ Առաջինն իր նախորդներով նյութ են դառնում ժողովրդական վեպի ու զրույցի եւ երգվում հին երգիչներից... պատմական-առասպելական երգերի ու զրույցների երկու մեծ շրջան. նախ՝ Հայոց վիպասանություն, Երգք առասպելաց կամ վիպասանաց (այլեւ թուելեաց), որի կենտրոնը հանդիսացել են Մեծն Արտաշեսն ու Տիգրանը»[82]:

79 **Ժ. Խաչատրյան, Ն. Հակոբյան**. «Արքունի քաղաք» Զարիշատի տեղադրությունը. «Էջմիածին», 2007, Թ., էջ 51:

80 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 53-54:

81 **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Ա., Երեւան, 1966, էջ 156-161, 164-179:

82 **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Է., 1975, էջ 315:

Մովսես Խորենացին Հայոց պատմության պատմական իրադարձությունների մասին տեղեկությունները քաղել է ոչ միայն Գողթան երգիչներից, նայած, թե որքան ճիշտ է ընդունել ժողովրդական վեպի էությունը եւ որչափ հաջող է մեկնաբանել: Մովսես Խորենացին հիշատակում է ավելի քան քառասուն աղբյուր[83]:

Սասանյան Պարսկաստանը Դ. եւ Ե. դդ. ագրեսիվ քաղաքականություն էր վարում Հայաստանի նկատմամբ: 360-ական թվականներին Շապուհ Երկրորդն ավերում է Հայաստանի քաղաքները: Պարսկաստանին հաճախ միանում էին նաեւ հայ նախարարները: 450-451 թթ. Հազկերտ Բ. պահանջեց նախարարներից (ժողովրդից) հրաժարվել քրիստոնեական կրոնից եւ ընդունել զրադաշտականություն:

Երկիրը կանգնել էր պատերազմի առաջ: Թեեւ վեց հարյուր հիսուն տարի աշխարհակալ արքա Մեծն Արտաշեսը չկար, բայց վիպասանները՝ Գողթան երգիչները, շարունակում էին երգել անկախ Հայաստանին եւ Մեծն Արտաշեսին փառաբանող երգեր: Արտաշես Առաջինի հիմնած մայրաքաղաք Արտաշատը թեեւ քանիցս ավերվել էր, սակայն շարունակում էր մնալ Հայաստանի մայրաքաղաքը եւ նրա հզորության խորհրդանիշը: Պատահական չէ, որ Հազկերտին պատասխան գրելիս նախարարներն ու հոգեւոր առաջնորդները մեկտեղվեցին Արտաշատում[84]:

Արտաշատն էր Վարդան Մամիկոնյանի կազմած նոր կառավարության մայրաքաղաքը: Պատահական չէ, որ հայոց զորքերը պարսկական բանակին դիմակայելու համար հավաքվեցին Արտաշատում: Տեղի ունեցավ զորամիավորումների հանդես, եւ քաջարի Վարդան Մամիկոնյանը դիմում է զորքերին անմոռաց ճառով, որն ավարտվում է ոգեկոչող բանաձեւումով՝ «Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին եւ երկիւղն փախիցէ ի մտաց եւ ի խորհրդոց մերոց»[85]: Եւ վերջապես, Ամենայն Հայոց Մեծ Աշխարհակալ Արքայի՝ Արտաշես Առաջինի վիթխարի նկարագրին դառնալով՝ Եղիշեն ավանդել է իր մարգարտաշար տողերը. «Միաբանք եւ միահաւանք, միահամուռ ժողովեալք ի թագաւորանիստ տեղին յԱրտաշատ, հաւանութեամբ մեծամեծ նախարարացն եւ ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխան»[86]:

83 **Մովսես Խորենացի**. Հայոց Պատմություն, մատենաշար, Երեւան, 1997, էջ 3-33:

84 Տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիր Գ. Տեր-Մկրտչյանի եւ Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1982, ԻԳ.:

85 Անդ, էջ 104:

86 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957, էջ 104: